***ՆԱԽԱԳԻԾ***

# ***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ***

# ***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

«____» _____ 2019 թ. N _____-Ն

ք. Ստեփանակերտ

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 137-Ն որոշման 2-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Եթե սույն որոշումը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնց հետևանքով պետք է դադարեցվի մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը փոխհատուցում ստացած հարկ վճարողներին փոխհատուցումների տրամադրումը, ապա մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կիրառվում են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող դրույթները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի մարտի 23-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

***«Հաստատում եմ»***

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***
***ՆԱԽԱԳԱՀ*** ***Բ. ՍԱՀԱԿՅԱՆ***

## ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

| Հ/Հ | ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ | ԹՎԱԳՐՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ | Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | |
| 2. | ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ | | |
| 3. | ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | |
| 4. | ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ | Ա. ԼԱՉԱՐՅԱՆ | | |

Առաջարկությունները և առարկությունները՝ _____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար Ժ. Միրզոյան

«____» _____ 2019 թ.

***ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ***
***«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ***

***Անհրաժեշտությունը***

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է 2019 թվականի մարտի 11-ին ընդունված որոշման արդյունքում փոխհատուցումը դադարեցված հարկ վճարողների համար անցումային ժամանակաշրջանի սահմանման անհրաժեշտությամբ:

***Ընթացիկ իրավիճակը և խնդիրները***

2019 թվականի մարտի 11-ին կատարված փոփոխությամբ սահմանվել է գյուղատնտեսական այն հումքերի ցանկը, որոնց վերամշակողները կարող են ստանալ փոխհատուցում: Արդյունքում, մինչև որոշման ուժի մեջ մտնելը փոխհատուցում ստացող որոշ հարկ վճարողների մասով դադարեցվել են փոխհատուցումները, մինչդեռ այդ հարկ վճարողները ունեն կնքված ապրանքների մատակարարման պայմանագրեր, որոնցում ապրանքների արժեքը սահմանվել է փոխհատուցման հանգամանքը հաշվի առնելով:

***Ակնկալվող արդյունքը***

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում փոխհատուցումը դադարեցված հարկ վճարողները կկարողնանան մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ստանալ փոխհատուցումներ:

***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք***

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից:

***Այլ տեղեկություններ***

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

***ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ***
***ՆԱԽԱՐԱՐ*** ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

## *Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք*

## *«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

## *Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք*

## *«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

*ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ*
*ՆԱԽԱՐԱՐ* *Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ*

***ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՄԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ***
***«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ***

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

***ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ***
***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԵՎ.ՀԱԿՈԲՅԱՆ***

## ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

***Որոշման նախագծի անվանումը՝***

«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 137-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

***Նախագիծը ներկայացնողը՝***

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

***ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝***

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ ֆինանսների նախարարություն

***Նախագիծը պատրաստողը՝***

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

_____ ***Եվ. Հակոբյան***

(ստորագրությունը)

«___» _____ 2019 թ.